ՀՀ Էկոնոմիկայի նախարար,
ՀՀ Էկոնոմիկայի նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
Գևորգ Պապոյանին,
«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն»
ՀԿ նախագահ
Օլեգ Դուլգարյանից

Դիմում/հայտ

Հարգելի պարոն Գևորգ Պապոյան,
Սույն դիմումով «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն ներկայացնում է հայտ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու համար:

1. Կազմակերպության անվանումը,
«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» համայնքային ՀԿ,
ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 14/35

2. Ներկայացվող թեկնածու,
Օլեգ Հայկազի Դուլգարյան,

3. Գործունեության աշխարհագրությունը,
ՀՀ Լոռու, Տավուշի, Սյունիքի, Արագածոտնի, Արարատի, Կոտայքի մարզեր:

3. Գործունեության ոլորտները,
Շրջակա միջավայր, Համայնքային զարգացում

Կից ներկայացնում ենք տեղեկատվություն կազմակերպության և թեկնածուի վերաբերյալ (Հավելված 1), որտեղ ներառված են պահանջված փաստաթղթերի հղումները:

Խնդրում ենք դիտարկել ներկայացված հայտը:

Հարգանքով

ՀՀԱԿ ՀԿ նախագահ

Օլեգ Դուլգարյան

24.11.2025

Հավելված 1

Տեղեկատվություն ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից խորհրդում ընդգրկվող ներկայացուցչի և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի և նրա փորձառության վերաբերյալ համայնքային զարգացման և գյուղական բնակավայրերի զարգացման ոլորտներում

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2009 թվականի նոյեմբերի 4-ին, ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքում:

Կազմակերպությունը իր աշխատանքային գործունեությունը իրականացնում է համայնքների շրջակա միջավայրի պաշտպանության և համայնքային զարգացման ոլորտներում:

1. Կազմակերպության գրանցման վկայականի տեղեկանքի պատճեն
(Տեղեկանքի լինքը)

2. Կազմակերպության Կանոնադրության (սկան, pdf) հասանելի էլեկտրոնային հղում
(Կանոնադրության լինքը)

3. Կազմակերպության ներկայացուցիչ, ով մասնակցելու է խորհրդի աշխատանքներին
3.1 Օլեգ Հայկազի Դուլգարյան,
3.2 հեռ, 098935053
3.3 էլ հասցե, oleg.dulgaryan.ccms@gmail.com
3.4 Անձնագրի պատճենի հղում (Անձնագրի լինք)

4. Կազմակերպության գործունեությունը համայնքային և տնտեսական զարգացման ոլորտներում:

4.1. 2010-2018 թթ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն հանդիսացել է Վորլդ Վիժն Հայաստանի գործընկերը ՀՀ Լոռու մարզում և իրականացրել է համայնքի բնակիչների նեչրգրավմամբ Ալավերդու և Ստեփանավանի տարածաշրջանների համայնքներում կարիքների գնահատման և համայնքային զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներ համայնքի բնակիչների ներգրավմամբ, որից հետո այդ վերհանված խնդիրների մի մասը ընդգրկվում էր համայնքների հնգամյա և տարեկան զարգացման ծրագրերում:

4.2. Վորլդ Վիժն Հայաստանի հետ, Լոռու մարզի Ստեփանավանի և Լոռու տարածաշրջաններում, իրականացրել է ֆերմերային տենտեսությունների կրթման և զարգացման գործունեություն:

4.3. 2021 թվականին կազմակերպությունը ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Փոքր Այրում գյուղում հիմնադրել էր «Գրին Քեմփ» էկո-գյուղական և քաղաքացիական զբոսաշրջության կենտրոն սոցիալական ձեռնարկատիրությունը, որպես համայնքի այլընտրանքային զարգացման մոդել: Այդ տարածաշրջանում, ներառյալ Փոքր Այրում, Մեծ Այրում, Ախթալա, Շամլուղ, Նեղոց բնակավայրերում այդ ժամանակ չի եղել գեթ մեկ հյուրատուն: Հիմնադրված կենտրոնի միջոցով կազմակերպությունը նախաձեռնել է զբոսաշրջիկների ներգրավման գործընթաց դեպի այդ գյուղ, զուգահեռաբար կրթելով գյուղի և հարակից բնակավայրերի բնակիչներին, հյուրընկալման, զբոսաշրջիկների հետ աշխատանքի, գիդության, թեյախմության, շրջակյա միջավայրի պաշտպանության և այլ հմտություններով, ինչը այս չորս տարիներին հանգեցրել է նրան, որ այդ գյուղը ներկայումս դառնում է տվյալ տարածաշրջանի զբոսաշրջության կենտրոն: Եվ ներկա պահին, գյուղում բացի «Գրին Քեմփ» ՍՁ-ն գործում են վերջին երկու տարիներին կառուցված և բացված,

Հավելված 1

երկու հյուրանոց, մեկ հյուրատուն, մեկ ռեստորան, մեկ խանութ, մեկ տնտեսական օժանդակ տնտեսություն: Կառուցվում է ևս մեկ հյուրատուն, գնվել են նոր տներ և տարածքներ նոր հյուրատներ կառուցելու համար այլ բնակավայրերից քաղաքացիների կողմից:
Փոքր Այրում գյուղում արդեն նկատվում է ներգաղթ (քանզի գյուղի բնակչության հիմնական մասը արտագաղթել է), անշարժ գույքի գները բարձրացել են:
«Գրին Քեմփ» էկո-գյուղական և քաղաքացիական հասարակության զբոսաշրջության կենտրոն ՍՁ-ի ֆեյսբուքյան էջի լինքը (https://www.facebook.com/GreenCamp.se)

4.4.Կազմակերպությունը իրականացնում է, համայնքների այլընտրանքային զարգացման ռազմավարությունների և հայեցակարգերի մշակման գործընթացներ ուղիղ և ներգրավելով ՀՀ այլ մարզերից համայնքային նախաձեռնություններին և գործընկերներին:
Կազմակերպությունը 2023-ին մշակել է Լոռու մարզի Մարց գյուղի այլընտրանքային զարգացման ծրագիրը համայնքի բնակիչների հետ իրականացնելով կարիքների գնահատում և քննարկումներ:
2024 թվականին համագործակցելով տեղական և միջազգային գործընկերների և համայնքների բնակիչների հետ, մշակել է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի, Գոգարան և Սարահարթ և Ալավերդի համայնքի Շամլուղ բնակավայրերի այլընտրանքային զարգացման հայեցակարգը (կից լինքը): Ներկա պահին, կազմակերպությունը նման հայեցակարգերի նոր բնակավայրերի մշակման համար ուսումնասիրություններ է իրականացնում Լոռիում և Սյունիքում և կընտրվեն նոր բնակավայրեր և կմշակվեն հայեցակարգեր համայնքների բնակիչների հետ միասին:
Կազմակերպության փորձառության հիման վրա, տեղական գործընկերների ներգրավմամբ այլընտրանքային զարգացման հայեցակարգեր են մշակվում ներկա պահին Սյունիքի Կապան, Արարատի Արտաշատ, Լոռու Փամբակ, Ալավերդի համանյքների բնակավայրերում, որոնք մշակվելուց հետո նրեկայացվելու են տեղական և մարզային իշխանություններին:

4.5. 2024 թվականին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն, «Հայկական Կարիտաս» Բարեսիրական կազմակերպության աջակցությամբ, «ԱՐԱՄԱԶԴ. Սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացում» ծրագրի շրջանակներում, համագործակցելով «Էկոպայուսակ» ՍՊԸ-ի հետ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքում իրականացրել է «Համայնքային զարգացում սոցիալ-էկոլոգիական տնտեսության կառուցման միջոցով» ծրագիրը, որի ընթացքում ավելի քան 30 խոցելի խմբերին պատկանող կանայք և երիտասարդներ ստացել են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, թեյ-բոմբեր թեյատեսակի արտադրության, հյուրընկալման և թեյախմության ծառայությունների կազմակերպման և մատուցման ուսուցում և հմտություններ: Որպես ապացույց, լինքով կցում ենք Հայկական Կարիտասի, միջազգային կազմակերպության մաս, տրված վկայականը, որը հավաստում է, որ «Համայնքային զարգացում սոցիալ-էկոլոգիական տնտեսության կառուցման միջոցով» ծրագիրը ճանաչվել է ամենանորարար ծրագիր (Վկայականի լինքը):

4.6. Կազմակերպությունը հանդիսանում է Սոցիալական ձեռնարկատիրությունների ասոցիացիայի անդամ, խորհրդի անդամ (https://www.facebook.com/asea.armenia):

4. 7. Կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների ասոցիացիայի անդամ (https://sme.am/) :

Նախագահ՝ Օլեգ Դուլգարյան

Reply Reply All Forward

Mon 11/24/2025 2:59 PM

OD

Oleg Dulgaryan <oleg.dulgaryan.ccms@gmail.com>

Դիմում հայտ Էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու համար

To PR of the Ministry of Economy; Angelina K. Chilingaryan

Follow up. Start by Monday, November 24, 2025. Due by Monday, November 24, 2025.

Հավելված 1-տեղեկատվություն ՀՀԱԿ ՀԿ.pdf
175 KB

Դիմում.հայտ ԷՆ կից խորհուրդ.pdf
96 KB

Հարգելի գործընկերներ,
Կից ուղարկում եմ "Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն" ՀԿ-ի դիմում/հայտը ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու համար:
Խնդրում եմ հաստատել հայտի ստացումը և դիտարկել հայտը:
Հարգանքով
Օլեգ Դուլգարյան

Regards
Oleg Dulgaryan
President
CENTRE FOR COMMUNITY MOBILIZATION AND SUPPORT / CCMS
Tel: (+374) 98 93 50 53 / 99 93 50 53
Email: oleg.dulgaryan.ccms@gmail.com
olegdulgaryan@ccms.am
ardulgar@gmail.com
WhatsApp: (+374) 98 93 50 53
Facebook : https://web.facebook.com/oleg.dulgaryan
Website : www.ccms.am
Address: Office Sayat -Nova 14/35 , 1702 Alaverdi -Lori - Armenia